12113

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«28» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 249 - 25

Նախաձեռնող՝ ***Դավիթ Սուքիասյան***
Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Առինջ բնակավայր, Պ. Սևակի թաղամաս, 10 փողոց 3

Գործունեությունը՝ ***Արարատի մարզի, Արտաշատ համայնքի, Արտաշատ բնակավայրի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում***

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 249 - 25
«28» հոկտեմբերի 2025թ.

Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Դավիթ Սուքիասյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Արտաշատ բնակավայր

Ներածական մաս. Դավիթ Սուքիասյանի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում կառուցել բնակելի բազմաֆունկցիոնալ համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի բ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի ապրիլի 9-ին տրված № ՆԹ-0408-25 նախագծման թույտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) համաձայն՝ նախագծվող հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոխվել է բնակելի կառուցապատման:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան ակումուլյատիվ գոգավորության կենտրոնական հատվածում, որտեղ ռելիեֆը հարթ է, իսկ բացարձակ նիշերը տատանվում են 832 – 833 մետրերի սահմաններում (քանի որ բացակայում էր գեոդեզիական հանույթը, այդ պատճառով նիշերը վերցվել են «Google Earth» ծրագրից, որն ունի որոշակի շեղում իրական բացարձակ նիշերից):

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հիդրոերկրաբանական տեսակետից հետազոտվող տեղամասում առկա են գրունտային ջրեր, որոնք ունեն ընդհանուր տարածում, սնուցվում են մթնոլորտային տեղումների և ձնհալի հաշվին և հանդիպում են չորրորդական հասակի լճային նստվածքներում: Գրունտային ջրերի հորիզոնը փորված հորատանցքերով հատվել է 3,5-4,2 մետր խորություններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Բնութագրվող տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախագծվող բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի հողամասը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում: Համալիրի վերին հարկերում նախատեսված է բնակելի հատվածամաս 222 բնակարանով: Բնակելի համալիրի հարկայնությունը նախագծված է 7-9 վերգետնյա հարկեր և 1 ստորգետնյա հարկ՝ նախատեսված որպես ավտոկայանատեղի:

Շինության առաջին հարկը նախատեսված է որպես հասարակական սպասարկման մասեր՝ առևտրային մաս, ընդհանուր 2157.3 քմ, և բնակելի մասի մուտքեր:

Համաձայն շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի կենսագործունեության ապահովման համար նախատեսված են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Շենքերի ջեռուցումն իրականացվելու է յուրաքանչյուր բնակարանի խոհանոցում տեղակայված տուրբո համակարգի գազի կաթսաներից:

Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է լինելու:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Կառուցապատողն օրենքով սահմանված կարգով դիմել է ՀԷՑ ՓԲԸ-ին՝ էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 6858 քմ,
- հողամասում առկա շինության ընդհանուր մակերեսը (քանդման ենթակա)՝ 4945.11 քմ,
- նախագծվող շինության զբաղեցրած մակերեսը 0.00 նիշում՝ 2516 քմ (36.7 %),
- նախագծվող շինության ընդհանուր մակերեսը (բոլոր հարկերը միասին)՝ 25768.4 քմ,
- կանաչապատ մասի ընդհանուր մակերեսը (ջրանցիկ մասեր)՝ 2778.5 քմ (40.5%)
- անջրանցիկ մասի ընդհանուր մակերեսը՝ 1563.5 քմ (22.8 %),
- բնակելի համալիրի հարկայնությունը՝ եզրային մասեր՝ 9 հարկ, միջին հատված՝ 7 հարկ,
- առավելագույն բարձրությունը հատակագծային նիշից՝ 33 մ,
- բնակարանների ընդհանուր քանակը՝ 222 բնակարան,
- ստորգետնյա հարկի մակերեսը (ե/բ սալի արտաքին եզրագծով)՝ 2607 քմ,
- ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակը՝ 54 կայանատեղի,
- բացօթյա ավտոկայանատեղիների առավելագույն քանակը՝ 65 կայանատեղի:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 21300 խմ, որից 6900 խմ անհրաժեշտ է հետլիցքի համար: Ավելցուկային 14400 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման, բեռնման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրվա ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (փոշու համար անթափանց ծածկոցներով) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի, հողային զանգվածների պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի հնարավոր արտահոսքը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում կապահովվեն սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար՝ աղմկահարույց աշխատանքները կիրականացվեն օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներով, ինչպես նաև դրանց շահագործումը կիրականացվի տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաները կապահովվեն համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր

ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդը աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ՝ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ կարմիրգրքյան տեսակներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնելով համապատասխան լիազոր մարմիններին:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության գործընթացներում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ նախատեսվող գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
4. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
5. Մինչև կառուցապատման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան մշակել ինժեներական ենթակառուցվածքների վերջնական նախագծային փաստաթղթերը և դրանք համաձայնեցնել իրավասու մարմինների հետ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Դավիթ Սուքիասյանի կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում նախատեսվող բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովակիմ Ֆրունզիկյան